

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Լևոն Աշոտի Հովնանյանի «ՀՀ ներդրումային շուկայի զարգացման արդի հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ժամանակակից շուկայական տնտեսակարգի պայմաններում տնտեսության և հասարակության զարգացումը մեծապես կախված է տվյալ երկրում ներդրումային հոսքերի ակտիվությունից: Ներկայումս, ցանկացած երկրում, ներդրումների մակարդակն էական ազդեցություն է գործում սոցիալ-տնտեսական գործընթացների վրա:

Հայաստանի Հանրապետությունում ներդրումային հոսքերի վերլուծությունը վկայում է, որ դրանք վերջին տասնամյակի ընթացքում նվազման միտումներ են ունեցել, ինչը պայմանավորված է մեր երկրի ներդրումային շուկայի ոչ բավարար զարգացվածությամբ, ներդրումային միջավայրի ցածր գրավչությամբ և պետական ներդրումային քաղաքականության ցածր արդյունավետությամբ:

Ներդրումային շուկայի զարգացման ուղիների պարզաբանման համար նախևառաջ անհրաժեշտ է բացահայտել և վերլուծել ոլորտում առկա հիմնական խոչընդոտները և դրանց առանձնահատկություններից ելնելով մշակել ներդրումային շուկայի բարելավմանը միտված պետական ներդրումային քաղաքականության առաջնահերթությունները և հիմնական ուղղությունները:

Նշված հիմնահարցերի լուծման համար պահանջվում է գիտական հիմնավորվածություն ունեցող ուղիների և մեխանիզմների մշակում: Սրանով է պայմանավորված սույն ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները

Հետազոտության հիմնական նպատակը՝ Հայաստանի Հանրապետության ներդրումային շուկայի զարգացման հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղիների մշակումն է: Նշված նպատակի իրականացումը ենթադրում է որոշակի խնդիրների և դրանց լուծումների առաջադրում, մասնավորապես.

- դիտարկել ներդրումների տնտեսական բովանդակությունը և ներդրումային գործընթացի կառուցվածքային առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում,
- ուսումնասիրել ներդրումային շուկայի կառուցվածքը, կազմակերպչական առանձնահատկությունները և գործունեության մեխանիզմները,
- պարզաբանել պետական ներդրումային քաղաքականության դերը ներդրումային շուկայի ձևավորման և կարգավորման գործում,
- ուսումնասիրել ներդրումային շուկայի կարգավորման այլ երկրների առաջավոր փորձը և բացահայտել ներդրումային շուկայի կառուցվածքային առանձնահատկությունները ՀՀ-ում,
- վերլուծել ներդրումային հոսքերը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների շարժընթացը և դրանց փոխառնչությունները ՀՀ-ում,
- ուսումնասիրել Հայաստանի ներդրումային շուկայի զարգացմանը խոչնդոտող գործոնները և վերլուծել այդ ոլորտում առկա հիմնախնդիրները,
- բացահայտել ներդրումային շուկայի զարգացմանը միտված պետական ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունները:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և չորս հավելվածից: Ատենախոսության առաջին գլխում («Ներդրումային շուկայի էությունը և գործունեության առանձնահատկությունները») ներկայացվել են «ներդրումներ» հասկացության տնտեսագիտական բնորոշման տարբեր

մոտեցումները, ներդրումային գործընթացի առանձնահատկությունները, ինչպես նաև ներդրումային շուկայի մեխանիզմը և կառուցվածքը:

Աշխատանքի երկրորդ գլուխը («Ներդրումային շուկայի կարգավորման առանձնահատկություններն արտերկրում և ՀՀ-ում») նվիրված է ներդրումային շուկայի ձևավորման և կարգավորման գործում պետական ներդրումային քաղաքականության դերի, համաշխարհային տնտեսության տարբեր օղակներում ներդրումային շուկայի կարգավորման առանձնահատկությունների և ՀՀ ներդրումային շուկայի կառուցվածքի ու վերջինիս բնորոշ առանձնահատկությունների վերլուծությանը:

Ատենախոսության երրորդ գլուխը («Ներդրումային շուկայի զարգացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում») հեղինակը նվիրել է ՀՀ-ում ներդրումային հոսքերը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծությանը, ներդրումային շուկայի զարգացմանը խոչընդոտող գործոնները և առկա հիմնախնդիրների բացահայտմանը, ինչպես նաև ՀՀ-ում ներդրումային քաղաքականության բարելավման ուղիների մշակմանը՝ ներդրումային շուկայի զարգացման համատեքստում:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսության գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, հանգում են հետևյալին.

- Հստակեցվել և համակարգված ներկայացվել են ՀՀ ներդրումային շուկայի զարգացմանը խոչընդոտող գործոնները, որոշակիացվել է ներդրումային արտոնությունների հասցեականությունը, ներդրումների արդյունավետությունը բարձրացնելու նկատառումներով՝ ներդրումային գործընթացի շրջանակում ներդրումային գործունեության մակարդակի և որակի կարևորագույն չափորոշիչները և դրանց առանձնահատկությունները:
- Ներդրումների արդյունավետությունը գնահատելու նպատակով կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության հիման վրա պարզաբանվել է

համախառն ներքին ներդրումների ազդեցությունը ՀՀ համախառն ներքին արդյունքի, ապրանքաշրջանառության և արտահանման վրա և բացահայտվել է, որ եթե ՀՆԱ-ՀՆՆ, առևտրաշրջանառություն - ՀՆՆ կապի դեպքում էլաստիկության գործակցի արժեքը կիրառելի է, ապա արտահանում - ՀՆՆ կապի դեպքում՝ կիրառելի է վերապահումով:

- Պարզաբանվել են պետական ներդրումային քաղաքականության հիմնական հատկանիշները, որոնք հանգում են հանրային շահին պետական ներդրումային քաղաքականության ուղղվածությանը, ներդրումային պայմանների և նախադրյալների համակարգի ձևավորմանը, պետության ներդրումային գործունեության հստակ դիրքորոշմանը, կանխատեսվող ներդրումային քաղաքականության և կապիտալ ներդրումների ոլորտային առաջնահերթությունների սահմանմանը:

Դիրողություններ արենախոսության վերաբերյալ

Առենախոսությունը գերծ չէ նաև թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Հետազոտության մեջ մի շարք եզրահանգումների համար հիմք են հանդիսացել տարբեր վարկանիշային աղյուսակները: Այսպես, հեղինակը անդրադառնում է Fitch, Moody's, Համաշխարհային բանկի Doing Business ցուցանիշներին: Այսօր աշխարհում ավելի ու ավելի է հասկանալի դառնում շատերի համար, որ նման աղյուսակները չեն կարող ամբողջապես արտացոլել իրական պատկերը՝ հիմնված խիստ վիճահարույց մեթոդաբանության վրա, ինչպես նաև վաղուց վերածվել են կոմերցիոն բաղադրիչ ունեցող և միաժամանակ քաղաքական դիրքորոշումների հետ աֆիլացված գործիքների: Հատկապես վերջին ճգնաժամերը մեծապես սասանեցին վստահությունը նման կազմակերպությունների և դրանց գնահատականների նկատմամբ:

Եթե, օրինակ, առաջնորդվենք, Doing Business գնահատականներով, ապա այնպիսի երկրներ, ինչպես Իտալիան, Խորվաթիան կամ Կիպրոսը հետ են Հայաստանից: Հետ է նաև Ասիայի արագ և արդյունավետ զարգացող և հզոր

տնտեսություն ունեցող Վիետնամը, որն իրականում ուղղակի օտարերկրյա ներդրումների ծավալներով աշխարհի երկրների քսանյակում է:

Արդյո՞ք այս աղյուսակները որոշիչ դեր են խաղում կամ ընդհանրապես դեր են խաղում ներդրումների ներգրավման հարցում և որքանո՞վ են ընդունելի դրանց արդյունքները գիտական աշխատանքի համար:

2. Հետազոտության հեղինակը ինչպես ատենախոսությունում, այնպես էլ սեղմագրում օգտագործում է «անցումային տնտեսություն» ձևակերպումը: Հայաստանը երեք տասնամյակից ավել անկախ պետություն է և արդեն անցել է ԽՍՀՄ պատմության ճանապարհի կեսը: Ընդ որում, Արևելյան Եվրոպայի երկրներում անցումային փուլը տևեց մի քանի ամսից մինչև մի քանի տարի և ավարտվեց դեռ 1990-ականների սկզբին: Խնդիրը ոչ թե անցումային տնտեսությունն է, այլ Հայաստանի տնտեսության նեոլիբերալ և փաստացի ծախողված տնտեսական մոդելը, որի պայմաններում երկիրը պերմանենտ ընկալվելու է «անցումային», սակայն այս խաղի կանոնների պայմաններում այդպես էլ երբեք չի դառնա զարգացած պետություն: Հետևաբար, անկախությունից ավելի քան երեք տասնամյակ անց «անցումային տնտեսության» սահմանման շրջանակում տնտեսական քաղաքականության դիտարկումը իրավիճակի ճշգրիտ գնահատման տեսակետից վիճելի է:

3. Հեղինակը ներդրումների խթանման նպատակով առաջարկում է կիրառել մի շարք արտոնություններ՝ ազատել մաքսատուրքից, պետական տուրքից, ավելացված արժեքի հարկից, շահութահարկից, գույքահարկից, հողի հարկից:

Եթե խոսքը տեղական ներդրողի և ներքին ներդրումների մասին է, ապա ստացվում է հազարավոր տնտեսվարողներին ամեն ինչից ազատել: Իսկ եթե խոսքը օտարերկրյա ներդրողի մասին է, ապա վիճելի է հավելյալ արտոնությունների տրամադրումը օտարներին ի հաշիվ ներքին ներդրողների: Այսպես կարող ենք դրդել շատերին սեփական ներքին ներդրումները ձևակերպել օտարերկրյա ներդրումների ճանապարհով, անուղղակի ստեղծել ներդրումների անվան տակ փողերի լվացման և օրինականացման մեխանիզմ:

Չմոռանանք նաև, որ մաքսատուրքերի հարցը կարգավորվում է Եվրասիական տնտեսական միության շրջանակներում և Հայաստանի Հանրապետության կողմից կիրառվող արտոնությունները չեն կարող անսահմանափակ լինել:

Ինչ վերաբերում է ԱԱՀ արտոնությանը, ապա նկատենք, որ արտահանողումը ազատված է ԱԱՀ-ից, իսկ միայն ներքին շուկայի վրա հիմնված ներդրողը չի կարող նշանակալի և մեծ լինել Հայաստանի պարագայում:

Վետևարար, մեծ մասշտաբներով հարկային և մաքսային արտոնությունների տրամադրման առաջարկությունը՝ ծախսատար ենթակառուցվածքների, տրանսպորտային, հումքային կամ սպառման շուկաների բացակայության պայմաններում, հավելյալ հիմնավորման կարիք ունի:

Եզրակացություն


Մեր կողմից նշված դիտողությունները կրում են մասնակի բնույթ և էապես չեն կարող բացասական ազդեցություն թողնել հետազոտության արդյունքների վրա: Լևոն Աշոտի Հովնանյանի ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար որոշակի կարևորություն ունեցող խնդիրներ:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 7 գիտական հոդվածներում: Սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Լևոն Աշոտի Հովնանյանի «Ներդրումային շուկայի զարգացման արդի հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն

և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

**Պաշտոնական ընդդիմախոս՝
Տնտեսագիտության թեկնածու,
Հայաստանի Հանրապետության
Հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի անդամ**



Ա. Ռ. Նոանյան

21 հունիսի 2022 թվական

**Ա. Ռ. Նոանյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ:
ՀՀ Հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
գլխավոր քարտուղար**



Գ. Առաքարյան